## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 45

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 04 մայիսի 2018 թվականի թիվ 6 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Արենի համայնքի ավագանու 04 մայիսի 2018 թվականի թիվ 6 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի ղեկավարի 2018 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին:

3. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելու համաձայնություն տալու մասին:

4. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից մրցույթով վարձակալությամբ հատկացնելու համաձայնություն տալու մասին:

5. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Նաիրա Տերտերյանին սեփականության իրավունքով պատկանող 2,3373 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու համաձայնություն տալու մասին:

6. Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին» մասնակցելու համաձայնություն տալու մասին:

7. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող նախկին ուսուցչի տան, ներկայիս բազմաբնակարան

շենքի տարածքը Ելփին բնակավայրի 4 ընտանիքների նվիրատվության կարգով տրամադրելու մասին:

8. «Արենի» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում Ավետիք Ասատրյանի թեկնածությունը հաստատելու մասին:

9. 2018 թվականի առաջին եռամսյակի ընթացքում «Արենի» ՀՈԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների մասին համայնքի ղեկավարի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին:

10. Արենի համայնքի արոտավայրերի եվ խոտհարքների օգտագործման կարգը հաստատելու մասին:

11. Արենի համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացում և հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ____________
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ____________
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ____________
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ____________
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ____________
6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ____________
8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ ____________
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________
10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ____________
11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՈՒԼԵՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01 arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 46

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արենի համայնքի ղեկավարի բյուջեի կատարման 2018 թվականի առաջին եռամսյակի հաղորդումն ընդունել ի գիտություն՝ սույն որոշման հավելվածի համաձայն:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ
6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ
8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ
10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
11. ՍԻՄՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արենի համայնքի ավագանու
2018 թվականի մայիսի 4-ի թիվ 46 որոշման

Եկամտային մաս.

հազար դրամ

| Եկամտատեսակ | Նախատեսված /եռամսյակ/ | Կատարողական /եռամսյակ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 1998.0 | 2256.7 | 112.9 |
| Գույքահարկ | 4525.3 | 5588.9 | 123.5 |
| Տեղական տուրքեր | 481.1 | 654.0 | 135.9 |
| ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ | 1450.0 | 1690.4 | 116.6 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 53710.1 | 53710.1 | 100 |
| Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ | 514.7 | 514.7 | 100 |
| Այլ եկամուտներ/Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված` համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 1968.5 | 4302.5 | 218.6 |
| **Ընդամենը** | **64647.7** | **68717.2** | **112.4%** |

| Ծախսային մաս | Նախատեսված /եռամսյակ/ | Կատարողական /եռամսյակ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 20100.0 | 20039.1 | 99.7 |
| Պարգևատրումներ | - | - | - |
| Էներգետիկ ծառայություններ | 3500.0 | 3226.7 | 92.2 |
| Կոմունալ ծառայություններ | 3100.0 | 3082.7 | 99.4 |
| Կապի ծառայություններ | 150.5 | 112.9 | 75.0 |
| Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | - | - | - |
| Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում | 1900.0 | 1841.0 | 96.9 |
| Դրամաշնորհներ | 17000.0 | 16895.4 | 99.4 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 1000.0 | 980.0 | 98.0 |
| Այլ ծախսեր | 1300.5 | 1202.5 | 92.5 |
| Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն | 2500.0 | 2400.0 | 96.0 |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 900.0 | 840.0 | 93.3 |
| **Ընդամենը** | **51451.0** | **50620.3** | **94.24%** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ` ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 47

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63-րդ հոդվածի պահանջներով Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող

1) 1.09952 հա (ծածկագիրը 10-006-0346- նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 300%-ի չափով 206160 (երկու հարյուր վեց հազար մեկ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

2) 0.7 հա (ծածկագիրը 10-006-0346-0053, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը արոտավայր) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 300%-ի չափով 131250 (մեկ հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

3) 2.18019 հա (10-006-0312-0046, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը վարելահող) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով 2496320 (երկու միլիոն չորս հարյուր իննսունվեց հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1.60798 հա (ծածկագիրը 10-012-0424- նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 300%-ի չափով 301500 (երեք հարյուր մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող

1) 0.00667 հա (ծածկագիրը 10-008-0056- նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային

գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200%-ի չափով` 45623 (քառասունհինգ հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ:

2) 0.00250 հա (ծածկագիրը` 10-008-0056- նպատակային նշանակությունը` բնակավայրերի, գործառնական նշանակությունը` այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200%-ի չափով` 17100 (տասնյոթ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ:

4) 0.40000 հա (ծածկագիրը` 10-008-0112- նպատակային նշանակությունը` գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը` ջրովի վարելահող) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով` 278000 (երկու հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ
6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ
8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ
10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 48

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող

1) 0.55670 հա (ծածկագիրը՝ 10-006-0248-0001 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 7000 ՀՀ դրամ:

2) 0.57549 հա (ծածկագիրը՝ 10-006-0287- նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի) հողամասը վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 10000 ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.54000 հա (ծածկագիրը՝ 10-008-0154- նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) հողամասը վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 7000 ՀՀ դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ____________

2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ ____________

3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ____________

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ____________

5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ____________

6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ____________

8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ ____________

9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________

10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ____________

11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 49

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱԻՐԱ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 2,3373 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշումը՝ Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Արենի համայնքի Ռինդ բնակավայրի հողերի օգտագործման ժ ամանակավոր սխեմայում կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Նաիրա Տերտերյանին սեփականության իրավունքով պատկանող 2,3373 հա (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-014-0112-0240) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին կազմել հողաշինական գործ և ներկայացնել ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» հաստատմանը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ____________

2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ____________

3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ______________

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ______________

5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ______________

6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ______________

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ______________

8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ ______________

9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ______________

10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ______________

11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԼԵՆ ______________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
22, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 50

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ» ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերի պահանջերով, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Տալ համաձայնություն Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական ներդրումների եվ տարածքային զարգացման ծրագրին» մասնակցելու հայտին` Արենի համայնքի համար մեքենատրակտորային պարկ ստեղծելու նպատակով:

2. Ֆինանսական միջոցների ստացման համար գործող կարգով կազմել տնտեսական զարգացման ծրագրի ֆինանսական հայտը:

3. Սահմանել, որ ծրագրերի ներկայացման համար համայնքի 2018 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագրերի իրականացման և համայնքային ներդրում կատարելու համար:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ____________

8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ ____________

9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________

10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ____________

11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 51

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԱԽԿԻՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՏԱՆ, ՆԵՐԿԱՅԻՍ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՏԱՐԱԾՔԸ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով, Արենի համայնքի Ելփին բնակավայրի բնակիչներ Քնարիկ Ավագյանի, Թևան Բադալյանի, Անահիտ Գրիգորյանի և Մարգարիտա Սաֆարյանի դիմումները Ելփին բնակավայրի նախկին ուսուցչի տան, ներկայիս բազմաբնակարան շենքի տարածքի անհատույց իրենց տրամադրելու մասին՝ Արենի համայնքի ավագանին

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող566.95 ընդհանուր մակերեսով նախկին ուսուցչի տունը, ներկայիս բազմաբնակարան շենքը, որն ունի 4 մուտք, նվիրատվության կարգով տալ Ելփին բնակավայրի ներքոհիշյալ բնակիչներին՝ ըստ մուտքերի.

1. Թևան Բադալյանին (մուտք 1, մակերեսը՝ 141,99 մ²)
2. Քնարիկ Ավագյանին (մուտք՝ 2, մակերեսը՝ 142.94 մ²)
3. Մարգարիտա Սաֆարյանին (մուտք 3, մակերեսը՝ 141,62 մ²)
4. Անահիտ Գրիգորյանին (մուտք 4, մակերեսը՝ 140,40 մ²)

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ______
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ______
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ______

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ____________

5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ____________

6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ____________

8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ ____________

9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________

10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ____________

11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՈԼԵՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
22, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 52

### «ԱՐԵՆԻ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՎԵՏԻՔ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, առաջին մասի 16-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ հավանություն «Արենի» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնում համայնքի ղեկավարի կողմից առաջադրված Ավետիք Ասատրյանի թեկնածությանը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ____________
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ____________
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ____________
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ____________
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ____________
6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ____________
8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ ____________
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________
10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ____________
11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐՏԻՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
22, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 53

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԱՐԵՆԻ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ և 42-րդ կետերով, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է`

«Արենի» ՀՈԱԿ-ի կողմից 2018 թվականին կատարած աշխատանքներն ընդունել ի գիտություն` սույն որոշման հավելվածին համաձայն:

Կողմ -11　　　Դեմ -0　　　Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ
6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ
8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ
10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`　　　ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արենիի համայնքապետարանի 2018 թվականի
մայիսի 4-ի N 53 որոշման

2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԱՐԵՆԻ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՎ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Աղյուսակ 1. Կատարված աշխատանքներ

| ԲՆԱԿԱՎԱՅՐ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԾԱԽՍ (ՀՀ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| Խաչիկ | Ներհամայնքային ճանապարհի մաքրում ձյան ծածկույթից | 64430 |
| | Հին աղբավայրի փակում | 36992 |
| Ընդամենը Խաչիկ բնակավայր | | 101422 |
| Ռինդ | Խմելու ջրագծի վերանորոգում | 66970 |
| | Աղբավայրի փակում | 21370 |
| | Դպրոցի տանիքի մասնակի վերանորոգում | 331850 |
| | Ոռոգման ջրագծի մաքրում էքսկավատորով | 231150 |
| | Դպրոցի ճաշարանի կոյուղագծի կառուցում | 115210 |
| | «Փառքի պուրակ» այգու հողային աշխատանքներ | 88820 |
| | Ռինդ, Ելփին և Չիվա բնակավայրերի աղբահանության տրակտորների վերանորոգում | 307000 |
| Ընդամենը Ռինդ բնակավայր | | 1162370 |
| Արփի | Օղորակիչների վրա հովհարների կառուցում | 57250 |
| | Հին աղբավայրի փակում | 290220 |
| Ընդամենը Արփի բնակավայր | | 347470 |
| Աղավնաձոր | Կոյուղու սպասարկման աշխատանքներ | 27320 |
| | Հին աղբավայրի փակում | 128150 |
| | «Խամեր» կոչվող տարածքից դեպի Աբանա ջրամբար ոռոգման ջրագծի համար ճանապարհի կառուցում | 944830 |
| | Խմելու ջրագծի վերանորոգում | 351240 |
| | «Խամեր» տարածքից դեպի Աբանա ջրամբար ոռոգման ջրագծի կառուցում | 710400 |
| | «Խամեր» տարածքից դեպի Աբանա ջրամբար ջրագծի կառուցում | 946230 |
| Ընդամենը Աղավնաձոր բնակավայր | | 3108170 |
| Արենի | Գույքի տեղափոխում համայնքի բնակավայրերից համայնքապետարան | 21780 |
| | Հին աղբավայրի փակում և նորի բացում | 461340 |
| | Խմելու ջրագծի վերանորոգում | 53000 |
| | Մետաղական աղբամանների պատրաստում | 108060 |
| | Ֆուտզալի դարպասների կառուցում | 85630 |
| | «Չամ» հանդամասի դրենաժի աշխատանքներ | 914400 |
| | Համայնքապետարանի շենքի ներսում պահակատան կառուցում | 469800 |
| | Ոռոգման ջրագծի ապամոնտաժում և տեղափոխում | 678490 |
| | «Չամ» հանդամասի ոռոգման մայր առուների վերանորոգում | 338150 |
| | «Խաչի տակ» թաղամասի ոռոգման ջրագծի վերակառուցում | 984210 |
| Ընդամենը Արենի բնակավայր | | 4114860 |

| | | |
|---|---|---|
| Ագարակաձոր | Մանկապարտեզի սանհանգույցի վերանորոգում | 502710 |
| | Հին աղբավայրի փակում, նորի բացում | 688790 |
| | Բնակավայրի ներհամայնքային ճանապարհների խճապատում | 214300 |
| | Մանկապարտեզի տանիքի մեկ լանջի վերանորոգում | 558360 |
| | Խմելու ջրագծի վերանորոգում | 20000 |
| | Խմելու ջրագծի վերանորոգում | 17400 |
| Ընդամենը Ագարակաձոր բնակավայր | | 2001560 |
| Ելփին | Մարզադահլիճի բասկետբոլի վահանակների և լուսամուտների ճաղավանդակների կառուցում | 417410 |
| | Հին աղբավայրի փակում | 101850 |
| | Դեպի հանդամասեր ճանապարհի վերանորոգում | 174040 |
| | Բնակավայրի մշակույթի տան ներքին հարդարում | 715170 |
| | Գերեզմանների համար էլեկտրասյուների և էլեկտրական գծերի կառուցում | 375600 |
| | Խմելու ջրագծի վերանորոգում | 17600 |
| Ընդամենը Ելփին բնակավայր | | 1801670 |
| Մոզրով | Դպրոցի դասասենյակի և միջանցքի վերանորոգում | 499570 |
| Ընդամենը Մոզրով բնակավայր | | 499570 |
| Ընդամենը 2018 թվականի առաջին եռամսյակ | | 13137092 |

Աղյուսակ 2. Չձևակերպված և ընթացքի մեջ գտնվող աշխատանքներ

| ԲՆԱԿԱՎԱՅՐ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ |
|---|---|
| Ելփին | Կուլտուրայի տան 4 դռների պատվիրում-տեղադրում |
| | Ճանապարհների խճապատում |
| | Ելփին-աղբավայրի ցանկապատի կառուցում |
| Չիվա | Ոռոգման ջրագծերի մաքրում էքսկավատորով |
| | Խմոցների պատրաստում, տեղափոխում և տեղադրում |
| | Ոռոգման ջրագծի ցինկյա խողովակների վերանորոգում |
| | Խմելու ջրագծի բաժանարարների վերանորոգում |
| Արենի | Ոռգման մայր առուների մաքրում էքսկավատորով |
| | «Քարատակի» առու ջրատարի վերանորոգում |
| | Ճանապարհների խճապատում |
| | «Նորք» ջրագծի նորոգում |
| Ռինդ | Ներքին Ավշար հանդամասի ոռոգման ջրագծի մաքրում էքսկավատորով |
| Խաչիկ | «Ծաղկոց» թաղամասի ոռոգման ջրագծի անցկացում |
| | «Առնետի ձոր» ոռոգման ջրագծի անցկացում |
| | Խմելու ջրի բաժանարարի պատրաստում և տեղադրում |
| | Սան-մաքրման աշխատանքներ |
| Աղավնաձոր | Տաղավարի կառուցում |
| | Աղբավայրի ցանկապատում |
| | Հանդամիջյան ճանապարհների բարեկարգում բուլդուզերով |
| Արփի | Կոյուղագծի մասնակի կառուցում |
| | Ճանապարհի կառուցում |
| | Ոռոգման ջրագծի վերանորոգում |
| Ագարակաձոր | Ոռոգման ջրագծի վերանորոգում |
| | Խմելու ջրագծի մասնակի վերանորոգում |
| | Ճանապարհների խճապատում |

Արենի համայնքի ղեկավար　　　　　　　　　　Հուսիկ Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 54-Ն

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ-ի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» թիվ 389-Ն որոշումն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող արոտավայրերի օգտագործման կարգը՝ սույն որոշման հավելվածի համաձայն:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ
6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
7. [illegible]
8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արենիի համայնքապետարանի 2018 թվականի
մայիսի 4-ի N 54-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերի և խոտհարքների կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները:

2. Սույն կարգի նպատակներն ու խնդիրներն են՝

1) Արենի համայնքի բնակավայրերում արոտավայրերի և խոտհարքների պահպանության և կայուն ու արդյունավետ օգտագործման գործընթացներին նպաստումը.

2) արոտավայրերի և խոտհարքների բերքատվության բարձրացման և վերականգնման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.

3) արոտավայրերի և խոտհարքների որակական բնութագրերի և բնապահպանական վիճակի վատթարացման կանխումը.

4) արոտավայրերի և խոտհարքների սանիտարական վիճակում պահպանության ապահովմանը նպաստելը:

3. Մինչև արոտավայրերի օգտագործումը կազմվում է արոտավայրերի օգտագործման պլան՝ հաշվի առնելով արածեցվող կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բերքատվությունը:

4. Արոտավայրերի կայուն և արդյունավետ օգտագործման նպատակով կիրառվում է արոտաշրջանառություն՝ հետևյալ սկզբունքներով՝

1) մինչև արոտային շրջանի սկսվելն ընդհանուր արոտավայրը բաժանվում է առանձին արոտամասերի (արոտաբաժինների), որոնք արածեցվում են որոշակի հերթականությամբ.

2) արածեցման հերթականությունը յուրաքանչյուր տարի փոփոխվում է.

3) նախորդ տարվա վերջին արածեցված արոտամասը հաջորդ տարում չի արածեցվում, թողնվում է «հանգստի»:

5. Արոտային շրջանի սկիզբը և ավարտը սահմանվում է յուրաքանչյուր տարի՝ ելնելով տվյալ տարվա կլիմայական պայմաններից:

6. Արոտային շրջանի տևողությունը համայնքի ցածրադիր, հարթավայրային և նախալեռնային գոտիներում կազմում է՝ խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 210-240 օր, մանր եղջերավոր կենդանիների համար՝ 270-300 օր, իսկ բարձր լեռնային գոտիներում համապատասխանաբար՝ 150-170 օր և 180-210 օր:

7. Միևնույն արոտատարածքում ամբողջական բոլորապտույտով արածեցումների թիվն ամբողջ արոտային շրջանում սահմանվում է՝

1) կիսաանապատային և չոր տափաստանային գոտիներում՝ 2-3 անգամ.

2) տափաստանային գոտում՝ 3-4 անգամ.

3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 4-5 անգամ.

4) ենթալպյան գոտում՝ 5-6 անգամ.

5) ալպյան գոտում՝ 3 անգամ:

8. Կենդանիների արածեցումն սկսվում է գարնանը բույսերի վերաճն սկսվելուց 15-18 օր հետո, երբ արոտավայրում բույսերը հասել են հասունացման, իսկ արոտականաչի բարձրությունը հողի մակերեսից կազմում է՝

1) կիսաանապատային, չոր տափաստանային և ալպյան գոտիներում՝ 6-8 սմ.

2) տափաստանային գոտում՝ 10-12 սմ.

3) մարգագետնատափաստանային, հետանտառային և ենթալպյան գոտիներում՝ 12-15 սմ բարձրություն:

9. Մեծ թեքություններում ($15^0$ և բարձր), որտեղ առկա է հողատարման (էրոզիա) վտանգ և բուսածածկը համեմատաբար թույլ է, արածեցումը կատարվում է սահմանված ժամկետից 10-12 օր անց:

10. Կենդանիների արածեցման համար հատկացվող արոտատարածքի մակերեսը սահմանվում է՝ ելնելով արոտային թույլատրելի բեռնվածությունից:

11. Արոտային թույլատրելի բեռնվածությունն արտահայտվում է մեկ հեկտարի վրա տեղաբաշխվող պայմանական անասնագլխաքանակով և որոշվում հետևյալ բանաձևով՝

$$ԱԹԲ = \frac{Բ}{Պ \times S},$$

որում՝

ԱԾԲ-ն՝ արոտավայրի թույլատրելի բեռնվածությունն է,
Բ-ն՝ 1 հա արոտավայրի բերքատվությունն է (խոնավ արոտականաչի զանգվածը), կգ/հա,
Պ-ն՝ 1 պայմանական անասնագլխաքանակի օրվա արոտակերի պահանջն է՝ կգ,
Տ-ն՝ արոտային շրջանի տևողությունը՝ օրերով:
12. Արոտային բեռնվածության որոշման նպատակով մեկ պայմանական կենդանու գլխաքանակին տարբեր գյուղատնտեսական կենդանիները հավասարեցվում են հետևյալ գործակիցներով՝
1) կով, արտադրող ցուլ՝ 1.0.
2) խոշոր եղջերավոր կենդանիների սեռահասակային այլ խմբերի կենդանի՝ 0.66.
3) մանր եղջերավոր կենդանի՝ 0.1:
13. Մեկ պայմանական գլխաքանակի համար ամբողջ արոտային շրջանում անհրաժեշտ արոտատարածքը կազմում է՝
1) կիսաանապատային գոտում՝ 6-7 հա.
2) տափաստանային գոտում՝ 2-2.5 հա.
3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 1.5-1.7 հա.
4) ենթալպյան գոտում՝ 1-1.2 հա.
5) ալպյան գոտում՝ 2-2.5 հա:
14. Արածեցման արդյունավետ եղանակը հերթափոխային (համակարգված) արածեցումն է, որի կիրառման համար արոտատարածքը պետք է բաժանել արոտավանդակների, որոնց մեծությունը 100 պայմանական անասնագլխաքանակ ընդգրկող նախրի համար կազմում է՝
1) կիսաանապատային և չոր տափաստանային արոտավայրերում՝ 40-60 հա.
2) տափաստանային արոտավայրում՝ 20-40 հա.
3) մարգագետնատափաստանային և հետանտառային արոտավայրերում՝ 20-30 հա.
4) ենթալպյան և ալպյան արոտավայրերում՝ 10-20 հա:
15. Հերթափոխային (համակարգված) արածեցման դեպքում ընդհանուր արոտատարածքը բաժանվում է հետևյալ թվով արոտավանդակների՝
1) ալպյան գոտում՝ 8-10.
2) ենթալպյան գոտում՝ 10-12.
3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 12-16.
4) տափաստանային գոտում՝ 16-20.
5) կիսաանապատային և չոր տափաստանային գոտիներում՝ 20-40:
16. Արոտավանդակներն առաջինից մինչև վերջինը, ըստ տեղադրվածության, արածեցվում են սահմանված հերթականությամբ՝ մինչև բոլոր արոտավանդակների արածեցման ավարտը, որից հետո կենդանիները դարձյալ փոխադրվում են առաջին արոտավանդակ և սկսվում է արածեցման հաջորդ բոլորապտույտը՝ ըստ հերթականության:
17. Արածեցված արոտավայրերում բույսերի կայուն վերաճ ապահովելու նպատակով արածեցման երկրորդ բոլորապտույտը պետք է սկսել առաջին բոլորապտույտի ավարտից 20-25 օր հետո, հաջորդ բոլորապտույտները՝ 35-40 օր անց, իսկ արոտավանդակներում արածեցման տևողությունը պետք է կազմի առաջին բոլորապտույտում՝ 2-3 օր, հաջորդ բոլորապտույտներում՝ 3-5 օրից ոչ ավելի:
18. Արոտավայրերում կենդանիների մակատեղերը (գիշերավայրը) պետք է կառուցել՝ ջրելատեղերից 300-500 մ հեռավորության վրա:
19. Ջրելատեղերի հեռավորությունն արոտավայրից պետք է լինի հետևյալ հեռավորության վրա՝
1) կթու կովերի համար՝ 1-1.5 կմ-ից ոչ ավելի.
2) բտվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համար՝ 1.5-2.5 կմ-ից ոչ ավելի:
20. Արոտավանդակների սահմանազատման նպատակով, որպես բնական սահմաններ, կարող են ծառայել արոտատարածքում առկա ձորակները, գետակները, հեղեղատները, թեքությունները, բացատները, թփուտները, ճանապարհները, իսկ դրանց բացակայության դեպքում անհրաժեշտ է օգտագործել շարժական ցանկապատեր, որոնցից առավել արդյունավետ են էլեկտրացանկապատերը:
21. Բնական խոտհարքներն օգտագործման են տրամադրվում խոտհնձի նպատակով: Խոտհնձի լավագույն ժամկետ է սահմանվում բուսածածկում գերակշռող արժեքավոր հացազգի (դաշտավլուկազգի) խոտաբույսերի հասկակալումից մինչև ծաղկման, իսկ թիթեռնածաղկավոր (բակլազգի) խոտաբույսերի դեպքում՝ կոկոնակալումից մինչև ծաղկման փուլն ընկած ժամանակաշրջանը:
22. Բնական խոտհարքներում խոտհունձն իրականացվում է 7-10 օրվա ընթացքում, երբ խոտի բարձրությունը հողի մակերեսից կազմում է 4-6 սմ:
23. Բնական խոտհարքներում յուրաքանչյուր երրորդ տարում խոտհունձն իրականացվում է խոտհնձի սեզոնի վերջում՝ բույսերին սերմնակալման և բնական վերարտադրության հնարավորություն ընձեռելու նպատակով:

Արենի համայնքի ղեկավար՝ Հուսիկ Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * 08914384 *

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 55-Ն

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արենի համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային միջոցներ գործառնական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 02 դասի 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից կատարել հատկացում ֆոնդային բյուջե 30.228.000 ՀՀ դրամ:

Նշված գումարն ուղղել.

1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի, 06 խմբի, 01 դասի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին 3.500.000 ՀՀ դրամ:

2) Կեղտաջրերի հեռացում գործառնական դասակարգման 05 բաժնի, 02 խմբի, 01 դասի 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին 4.620.000 ՀՀ դրամ:

3) Նախադպրոցական կրթություն գործառնական դասակարգման 09 բաժնի, 01 խմբի, 01 դասի 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին 8.240.000 ՀՀ դրամ:

4) Ջրամատակարարում գործառնական դասակարգման 06 բաժնի, 03 խմբի, 01 դասի 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին 13.868.000 ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային միջոցներ գործառնական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 02 դասի 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից պակասեցնել 6.000.000 ՀՀ դրամ և ուղղել ոռոգում գործառնական դասակարգման 04 բաժնի, 02 խմբի, 04 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին:

3. Ոռոգում գործառնական դասակարգման 04 բաժնի, 02 խմբի, 04 դասի 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածից պակասեցնել 6.000.000 ՀՀ դրամ և

ուղղել ջրամատակարարում գործառնական դասակարգման 06 բաժնի, 03 խմբի, 01 դասի 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին:

4. Ջրամատակարարում գործառնական դասակարգման 06 բաժնի, 03 խմբի, 01 դասի 5113 (շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում) հոդվածից պակասեցնել 3.550.000 ՀՀ դրամ և ուղղել նույն ոլորտի 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ
2. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ
3. ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ
6. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ
8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ
10. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
11. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ